



Հակոբ Պարոնյան

Ազգային ջոջեր

ԿԱՐԱՊԵՏ Ն. ՓԱՆՈՍԵԱՆ

Կարապետ Ն. Փանոսեան, խմբագիր-տնօրէն Մանգումէի Էֆրեար Էսենֆենկիզ լրագրոյ, տէր-տնօրէն Ազապեան տեղեթամիզ վարժարանի, ծնած է Կեսարիա 1836 թուականին: Իւր անհամբեր եւ նեղսիրտ բնատրութիւնը գիտցողները կրնան գուշակել՝ թէ ինն ամսուայ մէջ որչափ չարչարած է իւր մայրը, արդեօք քանի քանի անգամներ փախչիլ փորձած է: Եւ արդարեւ ինն ամիս արգանդի մէջ բանտարկուիլը մեծ ժամավաճառութիւն էր Փանոսեանի համար, որ ինը ժամուան մէջ ինը հարիւր փոխառութիւն եւ ինը հազար հայիոյութիւն կրնայ ընել: Ուստի բնաւ թերահաւատութիւն ընելու չէք, երբ ըսեմ ձեզ՝ թէ Փանոսեան մօրն արգանդին մէջ սկսաւ խորհրդածել, թէ ի՛նչ հնարքով կարելի է որ մարդ մը մօրն արգանդին շհանդիպելով ուղղակի աշխարհ գայ: Ատոր վրայ կը խորհէր եւ պատրաստուած էր յօդուած մ՛ալ գրել, երբ մանկաբարձն իրեն իմացուց պայմանաժամին լրանալը:

Փանոսեան աշխարհ գալուն պէս աչերը բացաւ եւ պոռաց. ի՛նչ թանձր տգիտութեան մէջ եմ մնացեր: Բարեկարգութեան եւ ազատութեան ջերմ սիրահար ցոյց տուաւ ինքզինքն՝ ոտներն ու ձեռներն միշտ դուրս հանելով խանձարուրէն: Դպրոցասէր ըլլալն ալ հասկցուց իւր մանկական հասակին մէջ: Հազիւ չորս տարեկան կար, խաղի թուղթերէն դպրոցներ կը շինէր, դրացիներու տղաներէն դրամ, կարասիք եւ այլն կը ժողվէր ի նպաստ իւր շինած վարժարաններուն եւ գրպանը կը նետէր: Հայրն ու մայրը նկատելով, որ իրենց գաւակն փառաւոր ապագայ մը կը խոստանայ թէպէտեւ վերջէն հասկցունցաւ,

որ շատ հաւատք ընծայելու չէ անոր խոստումներուն կ'որոշեն Կ. Պոլիս ղրկել զինքն, որպէսզի երթայ հոն դաստիարակութիւն առնէ:

1846-ին Վոսփորէն ներս մտաւ Փանոսեան: Այս թուականին մէկ օրուան մէջ բարեկարգ վարժարան մը գտնելը խիստ դժուար ըլլալով՝ նախնական ուսմունքն առնելու համար ղրկուեցաւ Խասագիղ հացագործի մը խանութը: Հոն սկսաւ քարոզել հաց առնելու համար խանութն եկող գործատրներուն եւ արհեստատրներուն, որ իրենց գործերը թողուն եւ մարմնամարզութեամբ պարապին, եթէ կ'ուզեն ազգին ծառայութիւն մատուցանել: Իր քովն աշխատող գործատրները կը խրատէր դաշնակ եւ պար սորվիլ: Իւր քարոզներն եւ խրատներն արդիւնք մը չունեցան, եւ երբ օր մը առաջարկեց տիրոջն, որ խանութը փլցունեն եւ դպրոց շինեն՝ տէրը բարկացաւ եւ պաշտօնն առաւ վրայէն:

Քանի մը ժամանակ պարապ մնալէն ետքը, 1851-ին Պոլսոյ երկրագործական վարժարանն ընդունուեցաւ բարերարի մը միջամտութեամբ: Այս ճիւղին մէջ մեծ յառաջդիմութիւն ըրաւ: Փորձ մը ընելու համար, օր մը հին կօշիկները տանը պարտէզին մէկ անկիւնը տնկեց, առտու երեկոյ ջուր տալ սկսաւ, բայց երբ տեսաւ, որ կօշիկները չեն բուսնիր՝ անիծեց հողն ու բուսաբանութիւնը եւ ազգը մարդ ընելու համար պաշտօն մը փնտռելու ետեւէ եղաւ:

1859-ին խմբագրութեան ասպարէզը նետուեցաւ Միւնստիի Էրճիայաս անուն լրագիրը հրատարակել սկսելով: Ամիրան ու արհեստատրն, կաթողիկոսն ու փոքրատրն, հարուստն ու աղքատն ամէնը բաժանորդ էր այս լրագրին յարձակումներուն, որոնք արդարացի ըլլալով՝ լաւ ընդունելութիւն կը գտնէին ժողովուրդէն, որ մինչեւ այն ատեն կը կարծէր, թէ ամիրայի մը թաշկինակին դէմ խօսիլը երկնից դէմ ասպտամբիլ էր: Այն ատենները Գերագոյն ժողովոյ մէջ անիրաւութիւնն ճշմարտութեան ներկայացուցիչն էր. բռնութիւնը գաւազան ի ձեռին կը նախագահէր. արդարութեան աթոռին վրայ ամիրաներու կամքը բազմած էր. իրաւունքը ֆալախա կ'անուանուէր եւ Փանոսեան իբրեւ մունետիկ փողոցներու մէջ կը պոռար.

«Հայեր, երէկ հազար տարեկան ճշմարտութիւն մը կորսուեցաւ պատրիարքարանի մէջ»:

Ժողովուրդն այս կեսարացիին ընթացքին հաւնելով՝ կը քաջալերէր գայն, որուն խմբագրատունն էր այն ատեն Վեգիը խանին մէջի սրճարանը, աթոռն էր տոպրակի մէջ լցուած հարիւր տրամ խոտ, գրասեղանն էր սրճարանապետին դռան քով դրուած սնդուկը եւ թաշկինակն էր իւր հագուստին թելը:

Ընթերցասիրութեան նոր վարժուող ժողովրդեան մը քաջալերութիւնն այս աստիճանին մէջ կը պահէին գինքը, եւ հարուստներն, որք տաղանդին, ինչպէս կ'ըսէ Յոբնադ, գովեստներէն ուրիշ բան չեն տար, միայն կը ծափահարէին Փանոսեանը: 1853-ին երբ Չէթունի կոտորածն սկսաւ, Փանոսեան քաջ ախոյեան հանդիսացաւ այս խնդրոյն մէջ, որ պատճառ եղաւ իւր լրագրին խափանման եւ իրեն բանտարկութեանը:

Խափանում, բանտարկութիւն բնաւ նշանակութիւն չունէին իւր առջեւ, մանաւանդ բանտն, որ իրեն համար առանց վարձու սենեակի մը մէջ նստիլ էր: Բանտէն ելնելուն պէս Թափասոական Հրեային տաճկերէն թարգմանութեանը ձեռնարկեց: Այս աննման վէպին թարգմանութեամբը մէկ կողմէն նախապաշարումները կը սպաննէր, միւս կողմէն տաճկերէն լեզուին ջարդ կու տար, եւ ամէն օր սիրտը կը դողար, որ չըլլայ թէ Էոժէն Սիւ ելնէ դատ բանայ իրեն դէմ: Այս ահ ու դողի մէջ անհնար ըլլալով թարգմանութեան շարունակութիւնը, կիսատ թողուց գայն, թէպէտեւ բաժանորդներէն ամբողջ բաժանորդագիւններն առաւ:

1866-ին յաջողեցաւ արտօնութիւն առնել Մանգումէի Էֆքեար անուն լրագրի մը՝ որուն հրատարակութիւնը մինչեւ այսօր կը շարունակէ: Այս լրագրին մէջ սկսաւ շարել իւր կարծիքները մարդերու հասկնալի կերպով. իսկ երբ 1869-ին Ագապեան վարժարանը բացաւ եւ անոր դէմ դիտողութիւններ տեղի ունեցան, սկսաւ Էշերուն խօսիլ: Առաջ իւր յօդուածներուն գլուխը հայե՛ր, հայե՛ր, կը գործածէր, վերջէն սկսաւ աւանակներ, Էշեր դնել: Ագապեան վարժարանի կոռույն մէջ այնպիսի անդուտն բերանով յարձակուեցաւ իւր մէկ պաշտօնակցին վրայ, որ ստիպուեցաւ դատի հրաւիրուել 1872-ին: Այս դատն այնքան հետաքրքրութիւն շարժեց, որ Մուսսա Պատնասի գագաթէն իջնալով ներշնչեց ինձի եւ ես երգեցի այն դատը:

Ինչո՞ւ չերգեմ նաեւ այսօր այն պատերազմն դիւցագներու, որք, սագի փետուրով գինուած, վեց ամիս իրարու դէմ կատաղաբար պատերազմեցան եւ դաշտի վրայ

հազարաւոր ընթերցողներ վիրաւորելէն ետքը՝ արիւնով ներկեցին համեստ դէմքերը: Ըսէ՛ ինձ, ո՞վ Մուսա, ի՞նչպէս եղաւ, որ Օրագիր ոճրագործ բառին վրայ սրտմտելով ասպարէզ կարդաց Մանգումէին, շո՛ւտ ըրէ, եկո՛ւր եւ օգնէ ինձ, որ այս վեցամսեայ պատերազմն արձակ երգով մը կարող ըլլամ երգել:

Այն ինչ վարդամատն Արշալոյս արեգական դռները բանալու համար դարբին փնտռելու իջած էր Հեփեստոսի բնակարանը, Օրագիր յանկարծ արթնցաւ եւ օր մահու եւ կենաց գոչեց այնպիսի սրտառուչ ձայնով, ուսկից շարժեցաւ մահճակալը: Քանի մը վայրկեան ձեռն ի ծնօտ խորհելէն ետքը՝ դիմեց գէնքերուն. առաւ զանոնք եւ գրպանին մէջ դնելով՝ արիաբար հեծաւ իր կօշիկներուն վրայ եւ սկսաւ յառաջանալ դէպի հոն, ուր պիտի սպաննէր թշնամին:

Միս կողմէն Մանգումէն հապճեպով հագուեցաւ իր պատերազմական հագուստները, զգեցաւ գրահն՝ ուսկից արեւուն ճառագայթները չեն կրնար թափանցել, առաւ իր գէնքերն, որ կը բաղկանային աւանակ, էշ, լիւրբ, ոճրագործ, անամօթ բառերէ եւ հետեւեալ ատենաբանութիւնն ըրաւ. դողացէք ոտներու տակ, ո՞վ գուլպաներս: Այս ատենաբանութենէն ետքը վերջին ողջոյնը տուաւ իր սենեակին այնպիսի սրտաճմլիկ խօսքերով, որ լալ սկսան բարձերն ու բազմոցները: Վերջին ողջոյնը տալէն ետքը մտրակեց իր կօշիկները եւ պատրաստուեցաւ իր ոտիսին դէմն ելնելու: Հասաւ վերջապէս այն ժամն, որ դէմ առ դէմ պիտի բերէր այս երկու ընթիշներն, որ իրարու երես տեսնել չէին ուզեր... սոսկալի վայրկեան... մուկ մը ասոնց մէջտեղէն անցաւ. երկու դիւցազները զարհուրեցան, բայց քաշութեամբ ետ ետ քաշուեցան: Յառաջ մօտեցիր, գոչեց Մանգումէն, երկու քայլ առնելով դէպի ետ: Այս հրաւերին վրայ Օրագիր անզգուշութեամբ Մանգումէին ոտքին վրայ կոխեց, ա՛յ թշուառական, ասանկ կատակ կ'ըլլա՞յ, պոռաց Մանգումէն: Օրագրին վրայ յարձակեցաւ, քաշեց մէջքէն գօտին եւ անանկ հարուած մը տուաւ ոճրագործով, որ վիրաւորեց Օրագրին ... ականջը: Օրագրին իր ուժն ժողվելով Մանգումէին գլխուն իջեցուց Տրամաբանութեան ահեղ գէնքը: Անպակուտակն Հայր Արամազդ երկնքին բարձրէն սարսափով կը դիտէր այս արիւնալի պատերազմը: Աստուածներէն ոմանք միջամտել կ'ուզէին, ոմանք չեզոքութիւնը նախամեծար կը համարէին, ոմանք զրահաւոր դրկել կ'որոշէին, ոմանք փոխաստութիւնը դադրեցունել կը փափաքէին. վերջապէս տարածայնութիւնն այնքան սկսաւ շփոթել

աստուածներն, որ աստուածներու Հայրն շանթ ի ձեռին ոտք ելաւ եւ այսպէս խօսեցաւ. «Անմահ մը չկրնար անխտիր մնալ մահկանացուներուն այս խեղճ վիճակին. ուստի, առանց ձեզմէ խորհուրդ հարցնելու, որոշեցի Առաքինութիւնը դրկել, որ երթայ հաշտեցունէ զանոնք: Բայց որպէսզի Առաքինութիւնը կարենայ իր պաշտօնն կատարել, հարկ է, որ կնկան կերպարանքով երեւի անոնց, որովհետեւ կիները իրենց փափուկ խօսքերովն կարող են քարէ սրտերն անգամ կակուղցնել»: Աստուածներն թող տուին, որ Արամազդ իր պատասխանատութեանը ներքեւ գործէ: Ուստի Առաքինութիւնն յանձն առաւ այս պաշտօնն եւ իսկոյն գեղեցիկ աղջկան մը կերպարանափոխուելով, ժպիտով մը վար իջաւ եւ կանգնեցաւ մեր դիցազներուն մէջտեղն, որոնց մին բանթալոնը կապելու զբաղած էր եւ միւսը ֆէսն կը մաքրէր: Ո՛վ դիցազներ, գոչեց Առաքինութիւնը, կը ճանաչէ՞ք զիս, Ամենեւին չեմ ճանչնար զքեզ. պատասխանեց Մանգումէն. բնաւ երբեք, այդ անունով բաժանորդ չունիմ, ըսաւ Օրագիր: Ներեցէ՛ք, մեր կեանքին մէջ բնաւ տեսած չունինք, պատասխանեցին երկուքը միաբերան. Առաքինութիւն է անունս, ըսաւ: Կարգուա՞ծ էք, օրհորդ, հարցուց Օրագիր, որ կը պնդէր՝ թէ Փանոսեան իրաւունք չունէր վարժարանը պառկելու, քանի ամուրի էր: Մարմնամարգութիւն գիտէ՞ք, հարցուց Մանգումէն, որ մարմնամարգութենէն դուրս ամէն բան իբրեւ անօգուտ կը նկատէր: Այս հարցումներուն վրայ Առաքինութիւնը ժպտեցաւ եւ կոտորտուելով Մանգումէին գիրկը նետուեցաւ. վերջը երկուքը մէկէն գրկելով, կնքել տուաւ պատուաւոր հաշտութիւն մը, որ կէս ժամէն ասելի չտեսեց: Այս վայրկենական հաշտութենէն ետքը Առաքինութիւնը թռաւ ասոնց վրայէն: Երկու բարեկամներն քանի մը վայրկեան ապշած իրարու երես նայելէն ետքը բաժնուեցան իրարմէ, իրաքանջիւրն հետը տանելով մէյ մէկ պատուաւոր հաշտութիւն: Արեւն, որ ի նշան տրտմութեան ապարանքէն դուրս չէր ելած, այս հաշտութեան վրայ իր դէմքը ցոյց տուաւ եւ իր լուսասփիտ ճառագայթները տարածելով սկսաւ շորցնել երկու դիցազներու վարտիքներն, որ թրջուած էին... քրտինքով:

Այս կերպով վերջացաւ ահա այն պատուաւոր հաշտութիւնն, որ վերջէն Սամաթիոյ մէջ այնքան յուզում պատճառեց:

Փանոսեան այս պատուաւոր հաշտութեան վրայ չփոխեց լեզուն եւ ամէն անգամ, որ ժողովրդեան խօսելու կ'ելնէր, միշտ անամօթ, ստախօս, խաբեբայ

ածականներէ կ'առաջնորդուէր: Վարժարաններու վրայ գրած յօդուածներէն
աւելի ազդեցութիւն ըրաւ այն յօդուածն, որ ճեմիշներու նուիրուած էր: Յիշեալ
յօդուածով, որուն վերնագիրն էր մենշեճէ ըսլահաթ, ո՛չ միայն ազգային, այլ
միջազգային ճեմիշներու նկարագրութիւնն ընելով՝ անոնց բարեկարգութեանը
վրայ կը պնդէր, բայց Մալթայէն Պեշիքա բերելու համար գրահատոր շունենալով
իւր առաջարկութիւնն անընդունելի կը մնար: Ազգի մը յառաջադիմութիւնը,
կ'ըսէր, ոչ թէ անոր լրագիրներէն, այլ ճեմիշներէն կը ճանչցուի, եւ իբրեւ փաստ
Բարիգու ճեմիշները կը ներկայացնէր իւր ընթերցողներուն այնպիսի գեղեցիկ
գոյներով, որ մերիններուն արժանապատուութիւնը կը վիրաւորէր: Փանոսեան
ամէն բանի մէջ միշտ առաջնութիւն փափաքելով՝ շատ անգամ սխալ քայլեր
առած է, եւ իւր սխալն զգալէն ետքը շարունակած է գայն. թերեւս կարծելով՝ թէ
մարդս եթէ յարատեւ իւր սխալին մէջ, այդ սխալն ուղիղի կը
կերպարանափոխուի: Մոսկալի յամատ մ'է իւր սխալին մէջ: Հին
իմաստասէրներէն մէկուն հարցուեցաւ օր մը՝ թէ ի՞նչ պէտք է մէկն
գինեմուտքենէ կտրելու համար. գինով մը դրէ՛ք առջին, պատասխանեց
իմաստասէրն, որ ուշի ուշով քննէ գայն: Մենք ալ խրատ կու տանք յամատ գաւակ
ունեցող հայրերուն, որ գոնէ անգամ մը Փանոսեանը ներկայացնեն իրենց
գաւակներուն: Այս յամատութեամբ է, որ երկու տարիէ ի վեր վայրկեան մը
չկորսնցնէր դէմ խօսելու այն ամէն որոշումներուն, զորս պատրիարքարանը կ'ընէ
ի դարման իւր ժողովրդեան վերքերուն: Չխղճար նաեւ վիրաւորելու այն ազնիւ
երիտասարդութիւնն, որ Հայաստանի մէջ ձրի ուսում ծաւալելու համար
անձնանուիրաբար կ'աշխատի. փոխանակ անոր թերութիւնները ցոյց տալու եւ
ուղղութեան հրաւիրելու, փայտի կտոր մը կ'առնէ եւ անոր գլուխը կ'իջեցունէ:
Թէպէտեւ միշտ Արգոս կը ձեւանայ այն թերութիւններուն, որ իրեն չեն դպչիր,
սակայն ես լաւ գիտեմ, որ սիրամարգի պոչին վրայ գտնուած աչերուն երկուքն
իւր աչերն են. որ չեն տեսներ այն խաբեբայութիւնները եւ թեթեւութիւններն, որ
ազգին պատուոյն կը դպչին: Շատ անգամ թագ կը շինէ այնպիսի անձերու,
որոնց ես մագերը կը փեթտեմ. եւ երբ ինքն ուրիշներուն շողոքորթ, ստախոս կ'ըսէ,
եւ ալ իրատունք շունի՞մ իրեն հարցնել՝ թէ բաւական սուր աչեր ունի՞ ուրիշներուն
կոյր ըսելու համար: Այսուամենայնիւ պէտք չէ կարծել, թէ իւր յօդուածներուն մէջ
ճշմարտութիւն չկայ. սակայն ի՞նչ օգուտ, ճշմարտութենէ աւելի հայեցողութիւն եւ
այլն, եւ այլն, եւ այլն եւ այլն կայ: Իւր թերթին էջերուն մէջ միշտ կ'իրքն ու
դատողութիւնը մենամարտութեան կ'ելնեն. կ'իրքը միշտ յաղթանակը կը տանի եւ

ճշմարտութիւնը կը վիրաւորուի: Չեմ հասկնար իր ոճը, բայց կը խորհիմ, թէ կարելի չէ՞ միթէ համոզել մէկն, որ երկու անգամ երկու չորս կ'ընէ, առանց կնքահայրութիւն ընելու եւ աւանակ անունով մկրտելու գայն: Սակայն ես վեր կը դասեմ զինքն միշտ այն քանի մը խմբագիրներէն, որ միշտ երկու անգամ երկուքը հինգ կը ներկայացնեն վսեմափայլ, բարձրապատիւ ածականներով, երբ մէկը հաճի կէս կանգուն քազմիր նուիրել իրենց. վասն զի անվայել ոճով պաշտպանուած ճշմարտութիւնը միշտ նախապատիւ է բաճկոնի մը գոհուած ճշմարտութենէն:

Միայն խմբագրական ասպարէզին մէջ չէ, որ Փանոսեան ծառայած է ազգին: 1867-ին Ազգային հիւանդանոցին ցաւալի կացութիւնն նկատողութեան առնելով՝ ինքզինքը ընտրելի ներկայացուց անոր ոչ իբրեւ խենդ, այլ իբրեւ տնօրէն եւ տնօրէն անուանուեցաւ այդ շէնքին, խոստանալով, որ կարճ ժամանակի մէջ պիտի բարեկարգէ խենդերուն վիճակը: Խենդերն անպատմելի ուրախութիւն զգացին այս լրոյն վրայ: Փանոսեան տնօրէնութիւնը վրան առնելուն պէս սկսաւ հիւանդանոցին պատերը բարեկարգել փլցունելով զանոնք եւ քաղաքակրթութեան պահանջումներուն համաձայն վերստին շինելով: Հիւանդանոցը պարտքի տակ ճնշուիլ սկսաւ: Հոգ չէ, կ'ըսէր Փանոսեան, առանց դրամի բարեկարգութիւն անկարելի է, ժողովուրդը միայն ստակ տալու է եւ ուրիշ բանի բնաւ խառնուելու չէ: Չափէն աւելի կ'աշխատէր, որ հիւանդներն ու խենդերը աղէկ ուտեն, խմեն եւ պառկին. այս աշխատութիւնն այնքան արդիւնաւոր եղաւ, որ շատ մը անգործ մարդեր խենդ ձեւանալով Փրկիչ մտան եւ հոն... պաշտօն վարեցին: Պատրիարքարանն Փրկչին այս կացութիւնը տեսնելով՝ ստիպուեցաւ տնօրէնութիւնն առնել Փանոսեանէն, որ խոշոր գումար մը պարտք թողլով ծառայեց ազգին:

1866-ի ատեններն էր: Նիկոմիդիոյ կողմերն սովն երեւան ելաւ եւ մեր հարուստներն իրենց ալիւրի շտեմարաններուն եւ ոսկիի սնտուկներուն հարիւր փականք կախեցին: Կեսարացի խմբագիրն ախոյեան կանգնեցաւ սովին եւ առաւօտէ մինչեւ երեկոյ վաճառականներու եւ արհեստաւորներու խանութները թափառելով ձեռները բացաւ, ողորմութիւն մուրաց եւ հաւաքած դրամովն ալիւր գնելով դրկեց սովալլուկ ազգայիններու, որք եթէ Ազգային Ժողովին որոշման սպասէին՝ անդիի աշխարհին մէջ պիտի տեսնէին ալիւրի երեսը:

Որպէսզի աղջիկներն անուս մնալով ազգային դաստիարակութիւնը կաղ չքալէ՝ 1869-ին վարժարան մը բացաւ Սամաթիա Ագապեան անունով, որուն մէջ ազատ դաստիարակութիւն պիտի առնէին ազգին աղջիկները: Ժողովուրդն իր քաջալերութիւնը չէր զլանար, գիրք, գրասեղան, դրամ, դաշնակ, ամէն բան կը նուիրէր իրեն, բայց այսչափ նուէրներով դարձեալ բաւական չըլլալով վարժարանին ծախքերուն հասնիլ, Փանոսեան սկսաւ յառաջադէմ աշակերտներն իր ծանօթներուն տունը տանելով, երգել եւ պարել տալով՝ նուէր հաւաքել: Այս ընթացքն ալ գոհացուցիչ արդիւնք մը չբերաւ եւ Փանոսեան սկսաւ իր յառաջադէմ աշակերտները Սարըյար տանել, պարտեզի մը մէջ խաղցնել եւ մէկ ոսկի օսմանեան մուտք առնելով Ազգային Սահմանադրութեան տարեդարձը կատարել: Ասով ալ շշատացաւ եւ սկսաւ ամէն տարի մէկ երկու անգամ քոնսեր տալ թատրոններու մէջ: Ժողովուրդն, որ այս տեսակ զարմանալի դաստիարակութիւն ո՛չ տեսած ունէր եւ ո՛չ լսած՝ դիտողութիւններ ըրաւ իրեն: Այս դիտողութիւնները Մանգումէի յատուկ լեզուով հերքուեցան. Ժողովուրդը դադրեցուց իր օգնութիւնները եւ Փանոսեան ստիպուեցաւ մնալ երեք աշակերտով. գորս քոնսերի կը հանէր ամէն անգամ որ ձեռքը գրպանը կը խոթէր եւ դրամ չէր գտներ հոն: Այնչափ շատ գործ ունէր, որ ցերեկը աշխատելով չէր կրնար իր գործերն ի գլուխ հանել, ուստի գիշերներն արթննալու համար Արիստոտէլի պէս հնարք մը գտած էր. այնչափ նեղ մահճակալի մը վրայ կը պառկէր, որ դառնալուն պէս գետին կ'իյնար եւ կ'արթննար. բայց ետքէն հարկ չմնաց նեղ անկողնի մէջ պառկելու, երկու հոգոյ անկողնի մէջ կը քնանար, բայց գիշերը քանի մը անգամ կ'արթննար. վասն զի հացագործն, նպարավաճառը եւ մսավաճառը կու գային կ'արթնցնէին զինքը իրենց առնելիքները պահանջելու համար: Փանոսեան անուամբ վարժարան մ'ալ բացաւ, որ մէկ տարուան մէջ քառասուն անգամ տեղ փոխեց: Այս վարժարանն չկրցաւ յարատեւել, վասն զի խաւարեալ, տգէտ եւ բարբարոս ժողովուրդն արական աշակերտներուն ձայնէն չէր ուզեր զգացուիլ, ուստի երկու տարուան մէջ գոցուեցաւ Փանոսեան վարժարանը, քսանի չափ աշակերտ հանելէն ետքը:

Փանոսեան պզտիկ մարդ չէ եւ ազգային ջոջերու մէջ աթոռ ունենալու իրաւունք ունի: Մեծ բարեկարգիչ մ'է, եւ եթէ Պոլսոյ թաղապետութիւնն այսօր իրեն յանձնուի՝ ամէն փողոցներու մէջ մէյմէկ սքանչելի ճեմիշ կը կառուցանէ եւ փողոցին մէջ միգողներու վրայ տուրք մը սահմանելով, կառավարութեան

դրամական տագնապի առաջքը կ'առնէ: Իւր բառարանին մէջ վիատութիւն չկայ: Յանդուգն ձեռնարկու մ'է, քսակին մէջ առանց դրամ մ'ունենալու օդի մէջ շոգեկառք բանեցնելու արտօնութիւնը սիրով կ'ընդունի, եթէ իրեն առաջարկուի: Յոգնութիւն բնաւ չգիտեր, շաբաթ մը շարունակ կարող է քալել. լեզուն այս մասին ծունկերէն յառաջադէմ է: Սովորութիւն ունի փողոցէն վազելով երթալ այնպէս, որ հետը ծանօթութիւն չունեցողները կը կարծեն, թէ պարտատէրն ետեւէն կու գայ: Իւր քանի մը պաշտօնակիցներէն շատ աւելի վեհանձն է, արժանապատուութիւնը միշտ կը պահէ ծոցը, եւ տունէ տուն չպտտիւր բաժանորդ գտնելու համար: Փոխառութենէ բնաւ չվախնար եւ երբ անկարող գտնուի իւր պարտքը վճարելու՝ բնաւ չկարմրիր. կարմրիլը, կ'ըսէ, նախապաշարում մ'է, գոր մեր նախնիք կը գործածէին եւ մենք, տասնիններորդ դարու գաւակներ, պարտաւոր չենք նախնեաց նախապաշարումներուն հետեւիլ: Լուսաւորիչ մ'է, եւ եթէ լեզուն եւ ընթացքը քիչ մը բարեփոխէ՝ շատ ծառայութիւններ կարող է ընել ազգին, որ դժբախտաբար կաւիճով պատի վրայ կը գրէ լրագրի մը բարիքները եւ օրացոյցի մէջ կ'արձանագրէ անոր թերութիւնները:

Փանոսեան բարեկազմ եւ արագաշարժ մարդ մ'է: Ունի սեւ աչեր եւ ընթուիներ: Գլուխն ոչ մեծ կը սեպուի եւ ոչ պզտիկ. այդ մեծութեամբ ոչխարի գլուխները երեք ու կէս դահեկանի կրնան գնուիլ այսօր: Լեզուն բաւական մեծ է. բայց դժուարամարս ըլլալուն համար չուտուի, եւ հետեւապէս բան մը չարժեր այսօր: Իւր դէմքին վրայ գաղափար մը տալու համար կը հարկադրուինք յիշեցունել այն մարդն, որ լուր կ'առնէ, թէ վիճակահանութենէ հարիւր հազար ֆրանք շահած է, եւ երբ այդ գումարը պահանջելու համար իւր բաժնետոմսին թիւը կը ներկայացնէ ընկերութեան, պատասխան կը տրուի իրեն.

Պարոն, շահող թիւը այդ չէ. լրագիրները սխալ հրատարակած են: